ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար հագուստի
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» մայիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Հարություն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Հարությունյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոն բաժնի պետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (29.04.2022թ.)՝ ժամը 15:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 02.05.2022թ.՝ ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1	Համազգեստ	6290500
2	Գլխարկներ	140000
3	Վերնաշապիկներ	4555200
4	Վերնաշապիկներ	4555200
5	Սվիտերներ	21257600
6	Սվիտերներ	11388000
7	Աշնանային-ձմեռային բաճկոն	2450000
8	Տարազաբաճկոն	490000
9	Գոտիներ	150000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	ք. Երևան, Շենգավիթ, Չեխով փ., շենք 50, բն. 16
ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի փողոց, 74
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ք. Երևան, Զ.Սարկավագի 157
Լենտեքս ՍՊԸ	ք. Գյումրի, Վ.Սարգսյան 111/3

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	6290500	0%	6290500	6226605	0%	6226605	
1	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	6289500	0%	6289500	6289500	0%	6289500	
2	Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	140000	0%	140000	138402	0%	138402	
2	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	139800	0%	139800	139800	0%	139800	
3	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	4547900	0%	4547900	4547900	0%	4547900	
4	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	3796000	20%	4555200	3796000	20%	4555200	
4	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	4547900	0%	4547900	4547900	0%	4547900	
5	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	17709800	20%	21251760	12169100	20%	14602920	
5	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	21243000	0%	21243000	16100000	0%	16100000	
6	Լենտեքս ՍՊԸ	7300000	20%	8760000	7008000	20%	8409600	
6	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	9490000	20%	11388000	7081000	20%	8497200	
6	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	11380700	0%	11380700	11380700	0%	11380700	
7	Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	2450000	0%	2450000	2424510	0%	2424510	
7	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	2449000	0%	2449000	2449000	0%	2449000	
8	Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	490000	0%	490000	484902	0%	484902	
8	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	489800	0%	489800	489800	0%	489800	
9	ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ	149000	0%	149000	149000	0%	149000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 02.05.2022թ.՝ ժամը 16:00-ին և

- 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 3-րդ, 9-րդ չափաբաժինների մասով ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 6-րդ չափաբաժնի մասով Լենտեքս ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 05-ին՝ ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Հարություն Դավթյան

_____ Արթուր Հարությունյան

_____ Լևոն Դավթյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար հագուստի
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» մայիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Հարություն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Հարությունյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոն բաժնի պետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի, ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ի, Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի և Լենտեքս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

2.2. ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) նշված իրական շահառուի նույնականացման քարտի համարը չի համապատասխանում վերոհիշյալ հայտով ներկայացված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված N 1.2) «4. Իրական շահառուի տվյալները» բաժնի «4.2. Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնի «4.2.2. Փաստաթղթի համարը» դաշտում նշված իրական շահառուի նույնականացման քարտի համարին: Ընդ որում, հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերությամբ սահմանված է, որ դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում,

- վերոնշյալ հայտարարագիրը կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ: Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում հայտարարագրի **4.7.3.-րդ** դաշտում կատարված նշումն ավելորդ է,

- 3-րդ, 9-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.3. Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ հիշյալ հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի

«4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ: Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում հայտարարագրի **4.7.3.-րդ** դաշտում կատարված նշումն ավելորդ է,

- 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.4. Լենտեքս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) երրորդ նախադասությունում լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը (լրացված է մասնակցի հայերեն անվանումը),

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են Հայտարարագրի «4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում Հայտարարագրի **4.7.3.-րդ** դաշտում անհրաժեշտ է կատարել համապատասխան նշում,
- Հայտարարագրի «4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժնի «4.6.1. Մասնակցության չափը (%)» և «4.6.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ:

Միաժամանակ՝ Հայտարարագիրը բաղկացած է 11 էջից, այն դեպքում, երբ «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը» դաշտում Հայտարարագրի էջերի քանակը նշված է «8»,

- 6-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 10-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած համապատասխան մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մայիսի 06-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Հարություն Դավթյան

_____ Արթուր Հարությունյան

_____ Լևոն Դավթյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար հագուստի
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» մայիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Հարություն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Հարությունյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոն բաժնի պետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ի, Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի, Լենտեքս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ն, Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն, Լենտեքս ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ի, Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի, Լենտեքս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 3-րդ, 9-րդ չափաբաժինների մասով ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 6-րդ չափաբաժնի մասով Լենտեքս ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ի հայտը մերժել,

- 6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի, ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Հարություն Դավթյան

_____ Արթուր Հարությունյան

_____ Լևոն Դավթյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան